ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 11 հոկտեմբերի (ՏԱՍՍ): Այսօր Ստեփանակերտում կայացավ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարներ Ա. Խ. Վեզիրովի և Ս. Գ. Հարությունյանի հերթական հանդիպումը:

Լավեց կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանի հաղորդումը մարզում տիրող իրադրության մասին:

Հանրապետությունների ղեկավարները ինֆորմացիա փոխանակեցին գործերի վիճակի, այն խնդիրների շուրջը, որոնք լուծում են Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունները, աշխատավորները էկոնոմիկայում, սոցիալական ոլորտում՝ լճացման երևույթների հաղթահարման և գաղափարաբարոյական մթնոլորտի առողջացման ուղղությամբ:

Առանձնակի ուշադրություն նվիրվեց Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքի քննարկմանը: Նշվեց, որ մինիստրություններին և գերատեսչություններին, տնտեսական մարմիններին առաջվա պես խանգարում է ջանքերի և համաձայնեցված որոշումների պատշաճ կոորդինացման բացակայությունը: Ընդգծվեց այդ ամբողջ աշխատանքի կարևորությունը այն հաշվով, որպեսզի առաջնորդվելով XIX համամիութենական կուսկոնֆերանսի որոշումներով, ապահովվի նախատեսված ծրագրի պարտադիր իրականացումը:

Նշվեց, որ ստեղծված իրավիճակում ծայրաստիճան անհրաժեշտ է որոնել պրոբլեմների լուծման կոմպրոմիսային ուղիներ, ընդառաջ գնալ միմյանց, ելնելով ինքնավար մարզի և ամբողջությամբ վերցրած, երկրի բոլոր աշխատավորների շահերից:

Հանդիպման ընթացքում մատնանշվեց, որ անհրաժեշտ է բարձրացնել կուսակցական կազմակերպությունների մարտունակությունը, ուժեղացնել նրանց աշխատանքը ազգամիջյան հիմքի վրա կոնֆլիկտների կանխման ուղղությամբ: Ընդգծվեց բնակչության, անկախ նրանց ազգային պատկանելությունից, անվտանգության ոլոր երաշխիքների կարևորությունը և անհրաժեշտությունը:

Հանդիպման մասնակիցները հանգեցին այն միասնական կարծիքին, որ ներկա մոմենտի գլխավոր խնդիրն է հաղթահարել երկու ժողովուրդների խորթացումը, միջոցներ ձեռնարկել ռեգիոնում դրության շուտափույթ կայունացման համար: ԼՂԻՄ-ի պրոբլեմները հնարավոր է լուծել միայն հանգիստ մթնոլորտում, դրսևորելով հրկուն, կշռադատված մոտեցում, համաձայնվելով փոխադարձ կոմպրոմիսի, ապահովվելով դրանց լուծումը պայմանավորող բոլոր գործոնները:

Մեծ ուշադրություն նվիրվեց երկու ազգերի վերաբնակների պրոբլեմների լուծման միջոցառումների իրականացմանը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Ադրբեջանի և Հայաստանի դեկավարության ներկայացուցիչների հետագա հանդիպումների վերաբերյալ:

Ա. Խ. Վեզիրովը և Ս. Գ. Հարությունյանը եղան ԼՂԻՄ Շուշվա և Ասկերանի շրջաններում:

Հանդիպմանը մասնակցում էր ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ Ա. Ի. Վոլսկին: